

**ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱԶԱՆԸ ԿԱՏԱՐԵՑ ՓԱՍԱՏԻՆԱՅԻ
Ս. ՍԱՐԳԻՍ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՍՐԲԱՊԱՏԿԵՐՆԵՐՈՒ ՕԾՈՒՄԸ**

Կիրակի, Օգոստոս 9, 2009ի առաւօտուն, բարեկենդան Ս. Աստուածածնի Վերափոխման Պահոց Տօնին օրը, Փասատինայի Ս. Սարգիս եկեղեցւոյ շրջափակը լեցուն էր հաւատացեալներու հոծ բազմութեամբ: Հոգեւոր Հովիւ, Հոգաբարձական կազմ, Տիկնանց Միութեան անդամուհիներ պատրաստ էին դիմաւորելու թեմիս Բարեխնամ Առաջնորդ Բարձր. Տ. Մուշեղ Ս. Արք. Մարտիրոսեանը, որ պիտի նախագահէր Ս. Պատարագին եւ պիտի կատարէր եկեղեցւոյ նոր սրբանկարներուն օծումը:

Պատարագիչն էր եկեղեցւոյ Հոգեւոր Հովիւ Արժ. Տ. Խորեն Զինյ. Պապօշեան: Արարողութեանց ներկայ եղաւ Մեծի Տանն Կիլիկիոյ միաբանութեան երեց անդամներէն Բարձր. Տ. Եփրեմ Արք. Թապազեան:

Ժամը 10:45ին, «Խորհուրդ Խորին» շարականի երգեցողութեամբ, սկսաւ Ս. Պատարագը: Նոյն պահուն, եկեղեցի հասան Առաջնորդ Սրբազանն ու Եփրեմ Սրբազանը եւ ուղղութեան դաս:Ներկայ էին եկեղեցւոյ գլխաւոր բարերարը՝ Տէր եւ Տիկին Սարգիս եւ Սիւզան Կիտցինեաններ, հանդերձ ընտանեօք, Սրբապատկերներու բարերարներ, հովանաւորներ եւ ազգայիններ դէմքեր:

Ժամը 12ին, հասաւ սրբապատկերներու օծման պահը. Սրբազան Հայրերը թափօրով եւ «Ուրախ լեր» շարականի երգեցողութեամբ Ս. խորան բարձրացան, ուր սրբապատկերներու օծման արարողութիւնը սկսաւ աղօթքներու ընթերցանութեամբ, սաղմոսներու փոխասացութեամբ եւ շարականներու երգեցողութեամբ: Առաջնորդ Սրբազան Հայրը «Առաքելոյ աղաւնոյ» հոգեպարար շարականի երգեցողութեամբ, միւռնաթափ աղաւնին ի ձեռին, միւռնն հեղուց սրուակին մէջ, հերթաբար օծեց մեր Տիրոջ՝ Յիսուս Զրիստոսին մկրտութիւնը, Աստուածամօր Վերափոխումը, Թարգմանիչ Հայրերը, Ս. Տրդատի մկրտութիւնը ներկայացնող եւ այլ խորհրդանշական Սրբապատկերները:

Օծման աւարտին, Առաջնորդ Սրբազան Հայրը փոխանցեց օրուան յատուկ պատգամը, փ'առք եւ գոհութիւն տալով Աստուծոյ, որ առիթ ընծայած էր իրեն եւ Եփրեմ Սրբազանին, կատարելու այս օծումը:

Առաջնորդ Սրբազան Հայրը առաջին հերթին գնահատեց եկեղեցւոյ Հոգեւոր Հովիւը, Հոգաբարձութիւնը, Տիկնանց Միութիւնը, Երեսփոխանական կազմը եւ անոնց եկեղեցանուէր աշխատանքը, ի խնդիր եկեղեցւոյ պայծառութեան:

Ան ողջունեց ներկայութիւնը եկեղեցւոյ բարերար Տէր եւ Տիկին Սարգիս Կիտցինեանի եւ ընտանեկան պարագաներուն, ինչպէս նաեւ բոլոր հովանաւորներուն, բարերարներուն եւ ներկայ բազմահարիւր հաւատացեալներուն:

Առաջնորդ Սրբազան Հայրը անդադարձաւ Աւետարանի Անդամալոյծին բժշկութեան առակին եւ անոր ընդմէջէն վեր առաւ զայն փոխադրողներուն հաւատքը, յիշեցնելով, որ բազմութեան պատճառաւ անոնք չէին կրցած Յիսուսի մօտ հասցնել անդամալոյծը, ուստի տանիքը քակելով եւ առաստաղը բանալով, պարանով անդամալոյծը իջեցուցին Յիսուսին ոտքերուն առջեւ: Առաջնորդ Սրբազան Հայրը կոչ ուղղեց ներկաներուն նմանիլ պատգարակը կրող այդ հաւատացեալներուն ու անոնց օրինակին հետեւելով՝ ժողովուրդը հրաւիրել եկեղեցի, կապել հոգիի տան, որովհետեւ հիւանդը կրողները վստահ էին որ Տէրը պիտի բժշկէր անդամալոյծը:

«Հայր Մեր»ի երգեցողութեամբ շարունակուեցաւ Ս. Պատարագը. տեղի ունեցաւ հաւաքական խոստովանանք եւ մեծ թիւով հաւատացեալներ ստացան Ս. հաղորդութիւն, որպէս քաւութիւն եւ թողութիւն մեղքերու:

Պատարագի ակարտին, Հոգաբարձությունն ու Տիկնանց Միությունը »Անտոն Անտոնեան« սրահին մեջ ճաշով հիւրասիրեցին Առաջնորդ Սրբազանը, եկեղեցւոյ բարերարներն ու հաւատացեալ ժողովուրդը:

Հոգեւոր Հովիւ Արժ. Տ. Խորէն Քիւյ. Պապօշեան խօսք անելով՝ գոհութիւն եւ փառք տուաւ Աստուծոյ, որ հոգեպարար օր մը պարգեւեց բոլորին, ապա բարիգալուստ մաղթեց Առաջնորդ Սրբազանին, եկեղեցւոյ բարերարին, Սրբապատկերներու հովանաւորներուն, այս բարեբաստիկ օրուան առիթով շնորհաւորեց եւ գնահատեց ներկաները եւ անոնց եկեղեցանուէր ծառայութեան ոգին:

Ապա, Առաջնորդ Սրբազան Հօր Պահպանիչով իր ակարտին հասաւ հիւրասիրութիւնը եւ ներկաները հոգեկան մեծ գոհունակութեամբ մեկնեցան եկեղեցւոյ սրահէն, ապրելէ ետք յիշատակելի եւ եզակի օր մը: